№ 81 ՀԻՆԳՇԱԲԹԻ 18 ԱՊՐԻԼԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 18 ԱՊՐԻԼԻ № 81

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրտանց յայտարարում է, որ ուրբաթ, ապրիլի 19-ին, Վանքի մայր-եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳԸ։

295. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ԱՅՍՕՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ապրիլի 18-ին տեղի կունենայ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

առաջին

ՀԱՄԵՐԳԸ

Մասնակցում են (այբբեն. կարգով) օր. ԻՋ. Ա. ՔԱԼԱՆԹԱՐ, ա. ա. Ե. Դ. ԱՖՐԻԿԵԱՆ, Ս. Ս. ԳԱՐԱԳԱՇ, ԻՒԼ. Ի. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ, ՑԻՑԻԱՆՕՎԱ-ԱՆԴՐՕՆԻԿՕՎԱ, պ. պ. Լ. Ն. ՊԻՇՆՕՎ, Ն. Ֆ. ՏԻԳՐԱՆԵԱՆ և Գ. ՎՐՈԲԸ։

Մանրամասնութիւնները ծրագրում։

Տեղերի գները՝ 4 րուբլուց մինչև 75 կոպ., աշակերտական 50 կոպ.

Տոմսակները կարելի է վաղօրօք ձեռք բերել Սուքամաջեանի երաժշտական խանութում, իսկ համերգի օրը դահլիճի մուտքի մօտ։

ՍԿԻԶԲՆ Է ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 9-ԻՆ

առ. (հ.) 185. 2—2

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

կիրակի, ապրիլի 21-ին, առաւօտեան ժամը 11-ին

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ կազմակերպում է

Ցերեկոյթ հանգ. Գ. Սունդուկեանի յիշատակին

Կը խօսեն՝

1. ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ՝ «Գ. Սունդուկեանը և իր ժամանակը».
2. ԱՐՇ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ «Հայ հասարակութիւնը Գ. Սունդուկեանի արտադրութիւններում».
3. ՄԱՄԲՐԷ ՄԱՏԷՆՃԵԱՆ՝ «Գ. Սունդուկեանի դրամատիկական արուեստը».
4. ՆԻԿ. ԱՂԲԱԼԵԱՆ՝ «Գ. Սունդուկեանի տաղանդի ինքնուրոյնութիւնը».
5. ՅՈՎՀ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ «Յիշողութիւններ Գ. Սունդուկեանի մասին».

Տոմսակները՝ 15 կ. մինչև 2 րուբլի արժողութեամբ՝ կարելի է ստանալ նոյն թատրոնի կասսայում։

(հ. կ.) առ. 289. 3—2

Ուրբաթ, ապրիլի 19-ին, Թոքախտի դէմ Մաքառող Կովկ. Ընկերութիւնը կազմակերպում է

Ջրի ժողովրդական դասախօսութիւններ մոգական պատկերներով հետևեալ տեղերում.

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆԸ.

- Բժ. Լ. Ս. ՕՀԱՆՋԱՆՕՎ, ռուսերէն, ցեր. ժամը 12½-ից մինչև 1½-ը—«Թոքախտը և առողջութիւնը»։
- Բժ. Յ. Վ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ, ռուսերէն, ցեր. ժամը 1½-ից մինչև 2½-ը—«Թոքախտը որպէս ժողովրդական աղէտ, և հասարակական մաքառումը նրա դէմ»։

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ.

«Թոքախտի մասին»

- Բժ. Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ, վրացերէն, երեկ. ժամը 5-ից մինչև 6-ը։
- Բժ. Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ, հայերէն, երեկ. ժամը 6-ից մինչև 7-ը։
- Բժ. Մ. Վ. ՖԼՕՐԻՆԱ, ռուսերէն, երեկ. ժամը 7-ից մինչև 8-ը։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ.

- Բժ. Ա. Ս. ԱՌՈՒՇԱՆԵԱՆ, ռուսերէն, երեկ. ժամը 8-ից մինչև 9-ը—«Թոքախտը և ժամանակակից մաքառումը նրա դէմ»։
- Բժ. Յ. Վ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ, հայերէն, երեկ. ժամը 9-ից մինչև 10-ը—«Թոքախտը և ժամանակակից մաքառումը նրա դէմ»։

առ. 297. 2—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է Ընկ. մեծարգոյ անդամներին շնորհ բերել ԵՐԿՐՈՐԴ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,** որ տեղի է ունենալու հինգշաբթի, ապրիլի 18-ին, ցեր. ժ. 12-ին, Паскевича, 13.

ՕՐԱԿԱՐԳՆ է.

1. Հաշւետուութիւն 1912 թ.։
2. Տուն առնելու խնդիրը։
3. Անձեռնմխելի և պահեստի գումարների խնդիրը։
4. Նախահաշւի վաւերացումը։
5. Ընտրութիւններ։

առ. հ. 290. 2—2

ԱՊՐԻԼԻ 7-ԻՑ ԲԱՑՎԱԾ Է ԴԵՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐՈՎ ՊԱՐԱՊՈՂ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹԸ

„ԿՈԼՈՍՍ“

Քիմայով, Սօլօլակսկայա փողոցի վրա Թիֆլիսի Փոխադ. Վարկի Ընկ. նոր շինութեան մէջ։ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱՅ իմ գործունէութիւնը Դեղատնային Ապրանքների Առևտրի Կովկասեան Ընկ. Երևանեան հրապար. վրա գտնվող խանութի տնօրէնի պաշտօնում, գործին հմուտ լինելը, նոյնպէս և Ներկայ նորաբաց խանութում յայտնի ֆիրմաների բարձր յատկութեան Թարմ ապրանքներ ունենալը իրաւունք են տալիս ինձ յուսալու, որ Թիֆլիսի հասարակութիւնը ուշադրութեան կառնի խանութը ու միևնոյն ժամանակ կատարելապէս կը համոզվի ապրանքները բարեխղճօրէն վաճառելու մէջ։

առ. 274. 10—5 (ա.օ.) ԱՐՏԵՄ Բ. ՕՎՉԵԱՆՑ

Ապրիլի 25-ին ցերեկվայ ժամը 12-ին ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ, շինական դատարանում նշանակված է ծխական դպրոցի մօտ 400 խ. սաժ. (куб. саж.) պատ ունեցող **շէնքի աճուրդը**

Նախօրօք պայմանների հետ ծանօթանալ կարելի է—Մեծ-Ղարաքիլիսայում շինարարական յանձնախմբի փոխ-նախագահ Յ. Յարութիւնեանի մօտ, Թիֆլիսում՝ Քամոյեան եկեղեցու ծխատէր Յովսէփ ք. Տէր-Պետրոսեանի մօտ և Ալէքսանդրոպոլում՝ «Ախուրեան» խմբագրատանը։

առ. 293. 4—1

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՋՈՒԼՖԱՅՈՒՄ

Հ. Յ. ԵՍԱՅԵԱՆՑԸ ՆԵՐԿԱՅ ԱՊՐԻԼԻ ՍԿԶԲԻՑ ԲԱՑԵԼ Է ՊԱՀԵՍՏ ԲԱՑԱՌԱՊԷՍ

Ա/Ց. Ն. Ի. Բօզարջեանց եւ Որդիք

ծխախոտային ֆաբրիկայի արդիւնաբերութեան համար՝ գլխաւորաբար յարմարութիւն տալու իր բազմաթիւ կլիէնտներին, առանձնապէս մանրավաճառներին, խուսափել այդ ֆաբրիկայի անունով կեղծված ապրանքները գնելուց։ Գնորդներին խնդրվում է դիմել Եսայեանցի լիազօր-ներկայացուցիչ ՋՀԱՆԳԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ—ՋՈՒԼՖԱՅՈՒՄ։

(18, 20) առ. 269՝ 4—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող
ՀԱՑԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

ԱՅՍՕՐ, հինգշաբթի, ապրիլի 18-ին

Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա—Ա. Ցագարելիի

Ինչ տեսնիս խս, էլ չիս տեսնի

Կոմեդիա 3 արար. Թարգ. Գ. Միրաղեանի

Ես մեռայ

Վօդեվիլ 1 գործ., Թարգմ. Ս. Թորոսեանի

Մասնակցում են. տ. տ. Թարխանեան, Մանուչարեան, Մարգարիտ, Ցասմիկ, Սաթենիկ, Փիլթաքեան, պ. պ. Գալստեան, Երամեան, Ծոնեան, Մարկոսեան, Մատինեան, Մելիք-Նուբարեան, Յարութիւնեան, Յարութիւնեան II, Պօղոսեան, Սերժ, Տէր-Յովհաննիսեան, Փիրումեան և ուրիշ.։

Սկիզբը ժամը 8½-ին։

Հերթապահ կարգադրիչներ՝
ԹՈՒՄԱՆԵԱՆ և ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ

առ. 294. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչէվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզօրօվ, Վ. Ա. Ջակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ումիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց։ Կօնսուլտանտ՝ պրօֆեսօր Մ. Ս. Սուբբոտին։

(հ.կ.) առ. 779. 100—47

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։

Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՕՎ։

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։

Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։

Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանօվսկայա)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 92. 100—51

ԲԺԻՇԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։

Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.

առ. (կ. ե. հ.) 4. 100—41

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ

(Նախկին օգնական Համայեվի)

Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը

Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը։

Վելիամինօվսկայա փողոց № 4, բն. 3.

առ. (օ.մ.) 120. 50—23

ԲԺԻՇԿ

Յ. Մելիք-Նուբարեան

ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս թոքերի։

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Ռտիշչէվսկայա 10 (Լերմոնտօվսկ. դեղատան դիմաց)։

(ե. հ. կ.) առ. 746. 100—80

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՀԱՅ ԲՕՆՆԱ

4 տարեկան մի տղայի համար։ Դիմել Ալ. Քիշմիշեանին Хлѣбная площадь, սեփ. տունը։

առ. 298. 2—1

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ.

Պետերբուրգից—Էջմիածին

Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսին.

Անկեղծ շնորհակալ եմ Ձեզանից և մաղթանքին բոլոր ներկայ եղողներից՝ աղօթքների և Ինձ ու Իմ ամբողջ Ընտանիքին արտայայտած բարեմաղթութիւնների համար։ ՆԻԿՕԼԱՅ

Այս հեռագիրը ստացված է պատասխան Վեհափառ Հայրապետի հետևեալ հեռագրի։ (Տպագրվում է Կայսերական Պալատի մինիստրի թոյլտուութեամբ)։

Էջմիածնից—Պետերբուրգ

Թագաւոր Կայսեր.

Ձերդ Կայսերական Մեծութիւն

Ամենաբարեպաշտ Թագաւոր

Ռոմանօֆների Օգոստափառ Տան փառաւոր թագաւորութեան 300-ամեայ համաժողովրդական այս մեծ յոբելեանի հանդիսաւոր օրը, Միածնէջ տաճարում սուրբ պատարագ մատուցանելիս և հանդիսաւոր մաղթանք կատարելիս, Աստուածային սեղանի առաջ, Էջմիածնի վանքի միաբանութեան և իմ հօտի հետ վերառաքում եմ ջերմ աղօթքներ և խնդրում եմ Ամենաբարձրեալ Աստուծուն՝ պարգևել երկար տարիներ Ձերդ Կայսերական Մեծութեանը, ամենաբարեպաշտ Թագուհի Կայսրուհիներին, սիրելի Թագաժառանգին և Ռոմանօֆների ամբողջ Օգոստափառ Տանը, ի փառս և յուրախութիւն թանգագին Հայրենիքի՝ Ռուսաց մեծ Պետութեան։ Բաղդ ունեմ ամենահպատակօրէն շնորհաւորել մեծ յոբելեանը, արկանելով առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան իմ, հայ հոգևորականութեան և հայ ազգի ամենահաւատարիմ զգացմունքները։

Գէորգ կաթողիկոս Ամենայն Հայոց
(«Արարատ»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12, 13, 14 և 15 ապրիլի

Լոնդոն.—Էսադ-փաշային մօտիկից ծանօթ անձինք վստահօրէն յայտնում են, որ նա իր կրթութեամբ, հարստութեամբ և ազդեցութեամբ կարող կը լինի ձեռք ձգել Ալբանիայի գահը։

—

Պետերբուրգ.—Բարձրագոյն շնորհով Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարգևատրվեց Ալէքսանդր Նէվսցու շքանշանով։

Բարձրագոյն պաշտօնական հրամանով՝ յանուն սենատի այս թւին զինւորական ծառայութեան են կանչվելու մինչև այժմ գործադրվող թւից աւելի երիտասարդներ, համաձայն Պետական Դումայի և Խորհրդի ընդունած օրինագծի։

—

Պետերբուրգ.—Պետերբուրգից Պօչայէվ մեկնելուց առաջ Անտիոքի պատրիարքը մեկնեց Ցարսկոյէ-Սէլօ և ընդունվեց Նորին Մեծութիւններից Մեծ Պալատի ընդունարանում։

—

Պարիզ.—Հավասի Գործակալութիւնը հրատարակել է միջազգային ֆինանսական մասնաժողովի ծրագրի հիմնական կէտերի մասին։ Մասնաժողովը կորոշէ օսմանեան պարտքի այն մասը, որ մնում է Թիւրքիայի կողմից գիջանելի երկիրների վրա։ Մասնաժողովը որոշելու է նաև կռւող կողմերի դրամական պահանջը։

—

Աթէնք.—Բուլղարական գեներալ Գեչանչիէվը յայտնեց, որ բուլղարական հետևակ գնդին Սալօնիկից յետ կանչելու կարգադրութիւնը վերացվեց այն նպատակով, որպէսզի ապացուցվի Բուլղարիայի և Յունաստանի լարված յարաբերութիւնների լուրերի անհիմն լինելը։

—

Լոնդոն.—Րէյտերի տեղեկութիւնների համաձայն՝ դեսպանաժողովի հետևեալ նիստը կայանալու է հինգշաբթի օրը։ Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտնում է, որ այժմ հիմք չը կայ յուսահատութեան։

—

Բուխարէստ. — Արդիւնաբերութեան մինիստրը յայտնեց ինտէրվիւի ժամանակ, որ նրա Իտալիա այցելելու նպատակն է ընդլայնել առևտրական յարաբերութիւնները Իտալիայի հետ և իտալացի դրամատէրերին կապել ռումինական առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւնների հետ։

Պրինց Կարլը մեկնեց Վենետիկ։

—

Բուխարէստ.—Կ. Պօլսից հեռագրում են, որ մեծ թւով մարդիկ, որոնք թշնամաբար էին վերաբերվում դէպի «Մ. և Ա.» կոմիտէը, փախան Ռումինիա և Եգիպտոս, երկիւղ կրելով կալանաւորվելուց։ Սաբբահ-Էդդինը մտադիր չէ մեկնել Կ. Պօլսից։

—

Բերլին.—Վիլհէլմ կայսրը վերադարձաւ Պոտսդամ և ցերեկով ընդունեց ստատս-սեկրետար Եագօվին երկարատև ունկնդրութեան։

Բերլինի ոստիկանութիւնը վերջերս արտասահմանից ստացաւ անանուն նախազգուշացումն, թէ իբր մահափորձ է պատրաստվում կայսրի կեանքի դէմ Կարլսրուհէում գտնված ժամանակ։ Բերլինի ոստիկանութիւնը տեղեկացրեց Կարլսրուհէի ոստիկանութեան, որը սակայն տեղեկութեանը նշանակութիւն չը տուեց։

Րէյխստագի բիւջէտային մասնաժողովը առանց կրճատումների ընդունեց զօրքերի թիւը աւելացնելու կառավարական օրինագիծը։ Հակառակ ձայն տուին սոց.-դեմօկրատ լեհերը և էլզասցիները։

Րէյխստագը երրորդ ընթերցումից յետոյ ընդունեց բիւջէն ձայների առաւելութեամբ ընդդէմ սոցիալիստների և լեհերի։ Նիստերը յետաձգվեցին մինչև մայիսի 14-ը։

—

Սայգօն.—Գանօյում ապրիլի 13-ին նետած ռումբից սպանվել են 2 ֆրանսիացի մայոր և վիրաւորվել են 6 եւրոպացի ու 5 տեղացի։ Յանցաւորը փախաւ։ Կատարվել են շատ ձերբակալութիւններ։

—

Պէկին.—Չը նայած օպպօզիցիայի բուռն ու կատաղի բողոքներին, երէկ պայմանագիր ստորագրվեց հինգ պետութիւնների հետ՝ փոխառութեան մասին։

—

Սեվաստոպոլ.—Կ. Պօլսից եկաւ «Կօլխիդա» ռազմանաւը։

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12, 13, 14 և 15 ապրիլի

Լիսաբոն.— Կառավարութիւնը, որ առաջուց գիտէր, թէ վերջերս սկսել է միապետական շարժում մի կողմից և հանրապետական արմատական կուսակցութեան շարժումը միւս կողմից, ձեռք առաւ նախազգուշական միջոցներ։ Լոյս ապրիլի 14-ի գիշերը քաղաքի զանազան մասերում նետվեցին ռումբեր, արձակվեցին ատրճանակներ հաւանօրէն իբրև ազդանշան անկարգութիւնները սկսելու համար։ Մի քանի զօրամասերի զօրանոցների առաջ ցերեկով երևացին ցուցարարների խմբեր, որոնց ցրեցին քաղաքացիները ոստիկանութեան ու հանրապետական հեծելազօրի աջակցութեամբ։ Եղածի մասին յայտնի դարձաւ միայն լրագիրներից։ Անկասկած է, որ շարժումը չաջողվեց։ Կատարվեցին ձերբակալութիւններ։ Գաւառներում հանգիստ է։

48 զինուորական տարան «Հանրապետութիւն» յածանաւը, մօտ 100 հոգու եւ տեղաւորեցին Սան-Ժօրժ բերդում։ Կալանաւորների թւումն են մի գեներալ, մի կապիտան, հինգ պօրուչիկ։ Լինելու են նոր ձերբակալութիւններ։ Ձերբակալվածների մեծ մասը պատկանում է հանրապետական արմատական միութեան։ Ոստիկանութիւնը և քաղաքացիական հեծելազօրը կազմակերպել են պաշտպանողական խմբեր։ Հինգերորդ գնդի զօրանոցի մուտքի մօտ գտնվեցին 4 ռումբ։ Ալկանդարա արուարձանում պայթեցին 2 ռումբ։ «Ալմիրանդէ Րէյս» յածանաւը հրաման ստացաւ պատրաստ լինել անմիջապէս դուրս գալու ծով։

—

Լիսաբոն.—Արմատականների ֆեդերացիայի շինութեան մէջ գտնվեց 173 ռումբ։ Ոստիկանութիւնը փակեց սինդիկալիստների միութիւնը։ Յեղափոխական շարժման նպատակը տակաւին պարզված չէ։

Գիշերս 13-րդ հետևակ գնդի զօրանոցի առաջ նետվեց երկու ռումբ։ Կալանաւորվեցին 12 բանւոր, որոնք աշխատում էին թեքել զինւորներին հակակառավարական շարժման։ Զինւորական մինիստրը քննելով գտաւ, որ զօրքերի մէջ տիրում է լիակատար կարգապահութիւն։

Մինիստր-նախագահը յայտնեց երկու պալատներում, որ կառավարութիւնը ճանաչում էր շարժման բոլոր պարագլուխներին, բայց միջոցներ ձեռք չառաւ նրանց դէմ, որպէսզի բոլորն էլ հնարաւորութիւն ունենան պարզօրէն գնահատելու նրանց յանցաւոր մտադրութիւնները, ուղղված հայրենիքի և հանրապետութեան դէմ. սակայն ագիտատօրները չը դիմեցին ագրեսիվ գործողութիւնների և երևան հանեցին ծայրայեղ երկչոտութիւն. կառավարութիւնը խորտակեց շարժման օջախը և յանձնեց յանցաւորներին դատարանին։ Պալատները արտայայտեցին կառավարութեանը վստահութիւն։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՍԿԻՒՏԱՐԻԻ ԿՆՃԻՌԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12, 13, 14, և 15 ապրիլի

Բերլին.— Պաշտօնական աղբիւրից տեղեկացնում են, որ դեսպանաժողովը առաջարկել է բալկանեան պետութիւններին՝ յայտնել հաշտութեան պատգամաւորների անունները և նշանակել հաշտութեան բանակցութիւնների տեղը։

Տեղեակ աղբիւրից հաղորդում են, որ Աւստրո-Ունգարիան Լոնդոնի դեսպանաժողովին պահանջ է դրել, որպէսզի Ցետինիէում մեծ պետութիւնների ներկայացուցիչները անյապաղ և վճռական ձևով պնդեն չերնոգորական կառավարութեան առաջ անմիջապէս հեռանալու Սկիւտարից և որպէսզի մերժման դէպքում որոշում կայացվի մեծ պետութիւնների ռազմի միջամտութեան մասին։ Եթէ դեսպանաժողովը դէմ լինի վերջին կէտին եւ, այն ժամանակ Աւստրո-Ունգարիան յայտնում է, որ նա կամ միայնակ, կամ համախոհ պետութիւնների հետ միասին կը ձեռնարկէ Եւրոպայի վճռի իրականացմանը։

Պաշտօնական շրջանները պահանջում են կտրական քայլ անել Սկիւտարի հարցում։ Հաւատացնում են, որ Աւստրո-Ունգարիան վճռական գործողութիւնների չի դիմի առանց վաղօրօք տեղեկացնելու Գերմանիային, որ պատրաստ է ամեն ժամանակ ցոյց տալ Աւստրիային սեկունդանտի ծառայութիւններ։

—

Ցետինիէ.—Ապրիլի 14-ին գահաժառանգը Պետր արքայազնի հետ վերադարձաւ Ցետինիէ, ուր նրանց ցոյց տրվեց հանդիսաւոր ընդունելութիւն։ Գահաժառանգը թագաւորին յանձնեց Սկիւտար բերդի բանալիները և թիւրքական երեք դրօշակ։ Թագաւորը գահաժառանգի հետ միասին մտաւ տաճար, որտեղից երկուսն էլ դուրս եկան վիրաւոր չերնոգորցի զինւորների հետ ժողովրդի բուռն ողջոյնով։

Թիւրքերը մաքրեցին Սկիւտարի ամրութիւնները ապրիլի 10-ին, 11-ի առաւօտը անցան Դրինը և շարժվեցին դէպի հարաւ հրացաններով ու թեթև արտիլերիայով։ Միաժամանակ քաղաք մտան երկու կողմից չերնոգորցիք, թւով 5 բատալիօն։ Էսադ-փաշան հեռացաւ բերդից ապրիլի 12-ի առաւօտեան։ Արքայազն Դանիլօն ծածանեց չերնոգորական դրօշակ։

Մեծ պետութիւնների ներկայացուցիչները միասին յայտնեցին չերնոգորական արտաքին գործերի մինիստրութեան, որ մեծ պետութիւնները մնում են իրանց նախկին վճռին. Սկիւտարը պէտք է անցնէ Ալբանիային, ուրով և չերնոգորցիք հեռանալու են քաղաքից։

—

Վիեննա.—Երեկոյեան լրագիրներում յայտարարված է հետևեալը. «Ինչպէս յայտնի է, Աւստրո-Ունգարիան այն դէպքում, եթէ Լոնդոնի դեսպանաժողովը մերժէ իր առաջարկութիւնը, իրան իրաւունք է վերապահում հանդէս գալ անկախօրէն և ստիպել Չերնոգորիային մաքրել Սկիւտարը։ Այժմ այդ առիթը եկել է։ Մտքերի ջերմ փոխանակութիւն տեղի կունենայ Վիեննայի և Հռոմի միջև։ Մի քանի երկիրներում այն կարծիքն է տիրում, թէ Աւստրիայի յայտարարութիւնները լոկ սպառնալիքներ են։ Դրա սխալ լինելը շուտով կապացուցվի»։

«Նէյէս-Վինէր-Տագէբլատը» հաղորդում է, որ զինւորական մինիստրը խորհրդակցեց Բերխտոլդի հետ։

«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէն» գրում է. «Բոլոր նշանները ցոյց են տալիս, թէ հնարաւոր է դառնում, որ Աւստրիան կռիւ սկսէ Չերնոգորիայի հետ առանց Եւրոպայի մասնակցութեան։ Եթէ Չերնոգորիայի պատասխանը բացասական լինի, այն ժամանակ Աւստրիայի գործողութիւնները կը ստանան աւելի խիստ ձև»։ Լրագրի ասելով, գերագոյն խորհուրդ գրաւելու լուրերը խիստ իջեցրին արժեթղթերի գները բօրսայում։

Լրագրական տեղեկութիւնների համաձայն, դեսպանաժողովի նիստում հինգշաբթի օրը լուծվելու է այն հարցը, թէ ինչպիսի բռնի միջոցներ է ձեռք առնելու Աւստրիան Չերնոգորիայի վերաբերութեամբ։

—

Վիեննա.—«Դէր-Մորգէնը» հաղորդում է, որ արքհիդուքս Ֆրանց-Ֆերդինանդ շտապով եկաւ շաբաթ օրը Վիեննա և խորհրդակցեց կոմս Բերխտոլդի և գեներալ շտաբի կառավարիչ Գետցէնդորֆի հետ. վերջին երկուսը ապա ունկնդրութիւն ստացան կայսրից երկար ժամանակով։ Ապրիլի 14-ին արքհիդուքսը խորհրդակցեց կայսրի հետ։ Հաղորդում են, որ արքհիդուքսը այն կարծիքի է, թէ զինված դիմադրութիւնը Չերնոգորիայի դէմ տեղին կը լինի սոսկ այն դէպքում, եթէ բոլոր միւս միջոցները պակասաւոր երևան։

Լրագիրները հաւաստիացնում են, որ Սկիւտարը վերցված է ոչ թէ զէնքի ուժով, այլ տրված է Չերնոգորիայի հետ առանձին համաձայնութեամբ։ Սկիւտարում մթերքները կը բաւէին դեռ կրկին 3 շաբաթ։

—

Պարիզ.—Լուրերի համաձայն, Սկիւտարը յանձնվեց շնորհիւ Նիկոլայ թագաւորի և Էսադ-փաշայի համաձայնութեան, որով վերջինս դիմելու է Տիրանա և հռչակելու է իրան Ալբանիայի թագաւոր։ Էսադ-փաշան ծագումով ալբան է։ Նրան հետևում են 10,000 ալբան զինւոր Սկիւտարի զօրքերից։ Թիւրք զօրքերը մնում են Սկիւտարի շրջակայքում Թիւրքիա դիմելու յոյսով։

ՉԵՐՆՕԳՈՐԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ ՍԿԻՒՏԱՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

«Р. Сл.» թերթի թղթակիցը Ցետինիէում վերջերս ունկնդրութեան է ընդունվել չերնոգորական թագաւոր Նիկոլայի մօտ։ Թղթակիցը ապրիլի 8-ից գրած իր թղթակցութեան մէջ նկարագրելով այդ ունկնդրութիւնը՝ առաջ է բերում Նիկոլայ թագաւորի հետևեալ խօսքերը.

«Ինձ համար ամենից վշտալին այն է,— ասել է թագաւորը թղթակցի մի շարք հարցերին,—որ ռուսաց դիպլօմատիան այնպէս անիրազեկ է։ Եթէ նա ուշադրութիւն դարձնէր իմ նախկին խնդիրներին, ոչ Ռուսաստանը, ոչ ես, ոչ էլ Չեռնոգորիան չէին գտնվի այնպիսի դրութեան մէջ, ինչ վիճակի մէջ գտնվում ենք մենք ներկայ րօպէին։

«Հէնց այդ է, որ ինձ ամենից առաւել ցաւ է պատճառում ռուսաց դիպլօմատիայի գործողութիւններից, որ տենդէնցիօզ ու սխալ կերպով աշխատեց ապացուցել ռուս ժողովրդին, թէ իբր ես միայն իմ շահերի համար եմ կամենում Ռուսաստանին նետել տալ եւրոպական պատերազմի մէջ։ Ընդհակառակն, գոյութիւն ունեն անհերքելի ապացոյցներ ու փաստաթղթեր, որ ես աղերսում էի Ռուսաստանին չենթարկվել համաեւրոպական պատերազմի վտանգին, որովհետև ես միշտ ասում էի, թէ ինչ էլ որ լինի Չերնոգորիայի հետ, մեզ կարող է փրկել միմիայն մեծ ու ուժեղ Ռուսաստանը։

«Ես միշտ մնացի կոռեկտ, և ցաւում եմ, որ չեմ կարող օգտվել բարեկամական խորհրդից՝ զիջումներ անելու։ դա իմ իշխանութիւնից վեր է, քանի որ իմ մտքերը իմ ժողովրդի մտքերն են։

«Չերնոգորիան XIV դարից մինչև XVIII դարի սկիզբը ապրել է բոլորովին անծանօթ Ռուսաստանից, բայց և այնպէս անյողդողդ մնաց ուղղափառութեան մէջ, չը նայած որ շրջապատված էր մահմեդական թիւրքերով և կաթոլիկ վենետիկցիներով։

«Սկիւտարի հարցը կարևոր է ոչ միայն Չերնոգորիայի, այլ և սերբերի և հարաւային սլաւոնների համար։ Ամբողջ սերբ և խորվատ ժողովուրդը, ամբողջ սլաւոնական հարաւը սպասում է անհամբեր Սկիւտարի անկմանը՝ տեսնելով սլաւոնական յաղթութիւնը նրանում, որ այդ քաղաքին տիրանան չերնոգորցիները։

«Ինձ ուրախացնում է մեծահոգի ռուս ժողովրդի համակրանքը։ Այդ համակրանքը ինձ է սփոփանք ծառայում այն տանջանքների ժամանակ, որ ես կրում եմ ներկայումս»։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Լոնդոն, 10/23 մարտի

Ինչպէս գիտէք, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Շվէյցարիայում հայկական հարցով զբաղվելու համար կոմիտէներ են կազմված հայասէրներից։ Արդ առաջիկայ ուրբաթ, 15/28-ին, Լոնդոնում կայանալու է մի կօնգրէս, որին պէտք է մասնակցեն յիշեալ 4 կոմիտէները, հայոց հարցի առիթով։ Յոյս կայ, որ այդ կօնգրէսին մասնակցէ և Ռուսաստանից պատգամաւոր։

**

—

Լոնդոնում այս ապրիլի 29-ին կայանալու է հայկական կօնգրէս բոլոր այն պետութիւնների պատուիրակների մասնակցութեամբ, որոնց սահմաններում ապրում են հայեր։ Կօնգրէսը մշակելու է Թիւրքահայաստանի համար անհրաժեշտ բարենորոգումների ծրագիր և դիմելու մեծ պետութիւններին խնդրելով աջակցել՝ նրանց իրագործմանը։

—

Լուրերի համաձայն, Կ. Պօլսի հայոց պատրիարք Արշարունի արքեպիսկոպոսը, տեսնելով որ թիւրքահայերի ներկայ կացութեան դիմաց թիւրքաց կառավարութիւնը ոչ մի բարենորոգիչ միջոց ձեռք չէ առնում, ուղարկել է Բ. Դրանը իր հրաժարականի խնդրագիրը։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

—

Վան, 21 մարտի

Եռամսեայ բացակայութիւնից յետոյ, վերադարձայ Վան և գտայ Խիզանի գաւառը եղկելի դրութեան մէջ։ Ոչ միայն ոչ մի լուրջ միջոց ձեռք չեն առել արդարադատութեան գործադրութեան համար, այլև ոճրագործներին կատարեալ ազատութիւն են տուել։ Հայ գիւղացիները սարսափով են տեսնում գարնան մօտենալը, որովհետև վստահ են, որ սպանութիւնների, կողոպուտների և այլ ոճիրների ու հարստահարութիւնների շարքը վերսկսվելու է։

Քիւրդ աւազակները ազատօրէն զինաւորում են քիւրդ գիւղերը։

Վանի վալին, որ իր պարտքը հակառակ է ըմբռնում, ոչ մի բան չէ արել դարման անելու։

Իրանց պաշտպանութեան համար մտածող հայերը և, մի քանի ժամանակից ի վեր, «Դաշնակցութիւն» կօմիտէի բազմաթիւ յայտնի անդամները հալածանքի ենթակայ են իշխանութիւնների կողմից։ Բանտերը լիքն են քաղաքական ամբաստանեալներով։ Եթէ այդ դրութեան դարման չը լինի, հետևանքը շատ ծանր է լինելու։

—

Վան, 21 մարտի

Ոզիմ և Խրոխանց գիւղերը, սովորական թատր ամեն տեսակ կեղեքումների, այժմ ծայրայեղ թշուառութեան են հասցված։ Կատարեալ ոչնչացման վտանգի ներքոյ են. այդ գիւղերի բոլոր երիտասարդները կամ բանտումն են կամ փախստական։ Երեխաները և ծերերը, մնացած միայնակ, զրկված ամեն միջոցներից, քաղցից մեռնելու վտանգին են ենթարկված։

—

Բիլէջիկ, 25 մարտի

Մի հայ ժանդարմ, Կիրակոս Կարապետեան, Ջիր գիւղի (Եօզղադի մօտ) բնակիչ, եկած լինելով գործով Բիլէջիկ, սպանվեց անցեալ օրը, մի ճաշարանում, հրացանի մի հարուածով, մի թիւրք ժանդարմի ձեռքով։ Գնդակն անցնելով կրծքից, մահը րօպէական եղաւ։

—

Վան, 25 մարտի

Թիւրքաց դատարանները, յայտնի իրանց մեղկութեամբ և սովորութեամբ՝ ձգձգել դատը ամիսներով, ինչպէս և հասարակական պաշտօնէութիւնը, որ բանտարկում է առանց պատճառի և կամայօրէն այս և այն անձին, ոչ մի վստահութիւն չեն վայելում։ Շատ մարդիկ նախամեծար են համարում փախչել, քան պրոկուրօրների կոչն ընդունել և ներկայանալ։

—

Բիթլիս, 31 մարտի

Մեր քաղաքի միւսիւլմանները, գրգռված մի սպանութեամբ, որի հեղինակն անյայտ է և որը վերագրում են հայերին, վիրաւորեցին 4 անձանց։

Հայ ազգաբնակութիւնը սարսափահար է եղել։

Աղերսում եմ արագ և կտրուկ պաշտպանութիւն։

—

Կ. Պօլսում ստացված տեղեկութիւնների համաձայն, դրութիւնը Հայաստանում ծանր է։ Վանում հայերը կալանաւորվում են, հալածվում են և սպանվում։ Տեղական վալին Բ. Դուռը «հրամայել» է դադարեցնել հայերին ճնշելը։ Այդընի ազգաբնակութիւնը փակվել է եկեղեցում չարդ սպառնացող ժանդարմների երկիւղից, որոնք կամենում են վրէժ լուծել իբր թէ Հայաստանը Ռուսաստանին վաճառելու համար։

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

—

Թիւրքահայերը եւ Ռուսաստանը

Վաղեմի համակրութիւնները դէպի Ռուսաստանը.—Դաշնակցականները.—Ռուսական կուլտուրայի տարածողները.—Նրանց խաղը Թիւրքիայի հետ և թեքումը դէպի Ռուսաստան.—Սրտաշարժ մանր դէպքեր։

Ճանապարհից ուղարկած իմ նամակներում ես յաճախ որոշակի ցոյց եմ տուել այն հզօր և զուտ տարերային ձգողական ուժը դէպի Ռուսաստանը, որ իմ աչքին ընկաւ ոչ միայն հայերի, այլ և եզիդիների և նոյն իսկ միւսիւլման ազգաբնակութեան մի մասի մէջ։ Այդ ձգողութեան գոյութիւնն հաստատեցին ինձ ինչպէս Վանի ռուսական փոխ-հիւպատոս Օլֆէրևեվը, չափազանց ժողովրդական և սիրված տեղական հասարակութիւնից, նոյնպէս և նրա կօլլէգ՝ ֆրանսիական հիւպատոս Զարչէսկին և գերմանական ու ամերիկական միսիօնէրները։ Հայերի կարծիքները, իբրև շահագրգռված անձանց, ես առաջ չեմ բերի։

Թիւրքահայերի համակրանքը դէպի Ռուսաստանը բնական հետևանք է մեր աւանդական ազատագրական քաղաքականութեան Մերձաւոր Արևելքում, որ առանձնապէս ջերմ կերպով բռնկվեց Բեռլինի կօնգրէսից յետոյ։

1890-ական թւականների սկզբին, դաշնակցականների՝ հայերի մէջ ուժեղապէս զարգացած գործունէութեան ազդեցութեան ներքոյ, սկեպտիկականութեան մի խիստ հոսանք թափվեց այն համակրութեան զգացմունքների և յոյսերի մէջ, որ ժողովուրդն ունէր Ռուսաստանի վրա։ Այդ հոսանքը շուտով փոխվեց ժողովրդի ինտելիգենտ, աւելի ճիշդ ասած՝ քաղաքային խաւերի մէջ յայտնի թշնամութեան։ Ռուսական յեղափոխութեան տապալումը և նրան հետևող ռէակցիան թափեցին այդ հոսանքի մէջ նոր, թարմ ուժեր ի դէմս ռուսահայ էմիգրանտների, որոնք ստիպվեցին փախչել Պարսկաստան և մասամբ Թիւրքիա։ Սահմանադրութեան հռչակումը Կ. Պօլսում և երիտ.-թիւրքերի յայտնի «սեթնեթմումը» հայերի հետ՝ ստիպեցին դաշնակցականների կուսակցութեան—կուսակցութիւն, որ՝ չը նայելով իր սօցիալ յեղափոխութեան՝ խորապէս ազգայնական է—ընկնել «Իթթիհադ վէ Թէրաքքը» կօմիտէի լայն բացված գիրկը։

Ոչ այնքան խորողապէս հաւատալով, որքան ցանկանալով ու ձևացնելով՝ թէ հաւատացել են, հայ ժողովրդի ձախակողմեան խմբերը երիտ.-թիւրքերի հետ կազմեցին քաղաքական սերտ բլօկ, որի սուր ծայրն ուղղված էր Ռուսաստանի դէմ։ «Դաշնակցականների ամենափոքր ցանկութիւնը կատարվում է «Իթիհատ» կօմիտէի կողմից միայն նրա համար, որ նրանք աղաղակում են իրանց ատելութեան մասին դէպի Ռուսաստանը»,—գրում էր այդ ժամանակ՝ ռուսական հիւպատոսներից մէկը Թիւրքիայում։ Դաշնակցականների ռուսատեաց այդ աւելի արհեստական (ես ցոյց կը տամ յետոյ, թէ ինչու), քան իսկական զգացումները՝ բուն ժողովրդի մէջ, սակայն, արձագանք չէին գտնում. գիւղացիական զանգուածը, ինչպէս և առաջ, շարունակում էր հաւատալ և բնազդօրէն սիրել Ռուսաստանը։ Եւ նոյն իսկ նոր հոսանքի ղեկավարների իրանց մէջ՝ թշնամութիւնը դէպի Ռուսաստանը զուտ ուղեղային էր, արտաքին, առաջ եկած՝ բացառապէս քաղաքական հաշիւներով. նրանք ամենքը դուրս են եկել Ռուսաստանից, կրթվել են ռուսական դպրոցներում, ռուսական գրականութեամբ և չեն ընդհատել Ռուսաստանի հետ ոչ միայն ազգակցական, այլ և կուլտուրական կապերը։ Բացի դրանից՝ օսմանեան ազատութեան տօնախմբութիւնը շատ շուտով փոխվեց լի օրերի, յետոյ նաև սուգի։ Փառաւոր և վառվռուն յոյսերի ու ակնկալութիւնների կարճատև լուսավառութիւնից յետոյ՝ փչեց ջախջախված և խաբված իլլիւզիաների դառն հողմը։

Անխնայ տապալումը դաշնակցականների քաղաքականութեան, որ կամենում էր կապել հայ ժողովրդի բաղդը Թիւրքիայի հետ, աւելի ևս ամրացրեց հայ ժողովրդական մասսաների մէջ այն համոզումը, թէ «արտաքոյ Ռուսաստանի՝ չիք փրկութիւն հայոց», և այդ գիտակցութիւնը 1910 թւի վերջերին այնպիսի հաստատ և ամուր ձև ստացաւ, որ ձախակողմեան ինտելիգենտ խմբերը, վախենալով թէ կը կորցնեն ժողովրդի վրա իրանց ունեցած ազդեցութեան վերջին մնացորդները, ստիպված էին վերադառնալ ռուսասիրութեան այն պատմական հունը, որից նրանք մի քանի տարի առաջ դուրս էին եկել այնպիսի աղմուկով։ Միայն այդ հանգամանքով կարելի է բացատրել այն տարօրինակ փաստը, որ ռուս զօրքերի Պարսկաստան մտնելուց յետոյ այդտեղից Թիւրքիա փախած դաշնակցականները օսմ. երկրում հանդիսացան ոչ թէ զայրացած հակառակորդներ (ինչպէս պէտք էր սպասել), այլ ընդհակառակը՝ եռանդուն և գործունեայ տարածողներ ռուսական կուլտուրայի և ազդեցութեան։ Դաշնակցական էմիգրանտներին է պարտական ռուսական առևտուրը այն արագ աջողութիւնների համար, որ նա ձեռք է բերել վերջին 2—3 տարին՝ Թիւրքիայի հետ մեր սահմանակից երկիրներում. դաշնակցական էմիգրանտներին ենք պարտական, որ թիւրքահայերի մէջ վերջին ժամանակներս տարածվում են ռուսաց լեզուն և ռուսական կուլտուրան. դաշնակցական էմիգրանտները, որոնք գլուխ են կանգնած Վանում և Էրզրումում ծայրայեղ ձախակողմեան մամուլի օրգաններին, այժմ շիտակ և բարձրաձայն խոստովանում են իրանց սխալը և յայտնի, համարձակ ու կրքոտ կերպով քարոզում են, թէ անհրաժեշտ է, որ հայ ազգը տայ իր վստահութիւնը Ռուսաստանին և միայն նեթ Ռուսաստանին։

Վանի ռուսական փոխ-հիւպատոս Օլֆէրևեվը հարկաւոր է համարում ընդգծել այն փաստը, որ Վանում հրատարակվող «Աշխատանք» դաշնակցական լրագիրը վերջին երեք տարին մի խօսք անգամ չարտասանեց թշնամական՝ Ռուսաստանի վերաբերմամբ, թէև շատ խիստ կերպով հանդէս է գալիս եւրոպական պետութիւնների և մանաւանդ Թիւրքիայի դէմ։

Հայ գիւղացիների դէպի Ռուսաստանը ունեցած սրտակցութեան գթաշարժ ու միամիտ օրինակներ հաղորդեց ինձ Օլֆէրևեվը։

Անցեալ ամառ՝ վիլայէթի գիւղերը ման գալիս՝ նա հասաւ Քեղզի գիւղը։ Այստեղ նրան ցոյց տուին մի զառամեալ և հոգեկան հիւանդ հայ ծերունու, որի ամբողջ հիւանդութիւնը այն է, որ 40 տարվայ ընթացքում ամեն օր առաւօտները դուրս է գալիս գիւղի ծայրը և նայում է դէպի հիւսիս. վերադառնալով ապա տուն՝ նա հառաչելով ասում է. «Ոչ, մոսկով քեռիները դեռ չեն գալիս»։

Մի ուրիշ օրինակ։

Հիւպատոսը երբ Հայկանեա գիւղումն էր, նրան մօտեցաւ մի շատ աղքատ հայ գիւղացի և մեկնելով նրան ռուսական մի հին րուբլի՝ ասաց. «Ես սրանից աւելի լաւ բան չունեմ. ես տալիս եմ քեզ՝ ինչ որ ունեմ. վեր առ այս րուբլին և միջնորդիր Ռուսաց Ցարի առաջ, որ ռուսները շուտով գան այստեղ»։

Ս. Օլգինին

Վան («Бирж. Вѣд.»)

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

—

Վաղուց է, ինչ «Berl. Tag.»-ում և գերմանական ուրիշ թերթերում սկսել են երևալ այնպիսի յօդուածներ, որոնց մէջ այդ լրագիրների անատօլիական թղթակիցներն ու Արևմտեան Եւրոպայի մայրաքաղաքներում գտնվող զանազան ուղղութեան տէր հայ գործիչները ամեն կերպ աշխատում են ապացուցանել գերմանական ու հայկական շահերի միատեսակութիւնը Փոքր Ասիայում։

Գերմանացիները, ինչպէս միշտ ու ամեն տեղ և ամեն բանում, այդ գործում էլ աշխատել ու աշխատում են կանօնաւորապէս ու միանգամայն խելացիօրէն։ Բաղդադի երկաթուղու զանազան մասերի շինութեան ձեռնամուխ լինելու հէնց առաջին օրերից գերմանացիները սկսել են մուտք գործել արևելեան վիլայէթների այն խուլ վայրերը, որտեղ հայ ազգաբնակութիւնը կռիւ է մղում մահմեդական մոլեռանդ ֆանատիկոսների սարսափելի լծի դէմ։ Հանդէս են եկել նրանք հայերի մէջ ոչ թէ միայն առեւտրական շրջիկ գործակալների դերերում, այլ և, որ աւելի վտանգաւոր է, միսիոնարների, բողոքական ու այլ գոյնի քարոզիչների դերերում։ Այդ քարոզիչների մէջ կան թէ գերմանահպատակ և թէ ամերիկահպատակ գերմանացիներ. վերջինները մինչև անգամ մեծամասնութիւն են կազմում։ Նրանք իրանց ենթակայ դպրոցական ու բարեգործական հաստատութիւնների աչքի ընկնող մի ցանց են կազմել, որը տարածվում է նաև Պարսկաստանում։ Հայաբնակ մի քանի քաղաքներում այդ միսիոնարները հիմնել են լաւ կազմակերպւած բազմամարդ ժողովրդական դպրոցներ, որտեղ նրանք մեծ սիրով ու եռանդով անձնատուր են եղել մատաղ սերունդի կրթութեան ու դաստիարակութեան գործին։

Այդ ասպարէզում թափած նրանց ջանքերը տարէ-տարի աւելի նկատելի են դառնում ու աչքի ընկնող պտուղներ տալիս։ Հայերի մէջ գնալով ստուարանում է կրթւած մարդկանց, ինտելիգենտ ուժերի թիւը. ասպարէզ են գալիս լաւ պատրաստւած քահանաներ, բժիշկներ և ուսուցիչներ. դրանք բոլորն էլ համարեա այն կարծիքին են, որ Ռուսաստանը—որը, նրանց խորին համոզմամբ, Արևելքի քրիստոնեաների փրկիչ հովանաւորն ու պաշտպանն է—դաշնագրական անյաղթելի հանգամանքների առաջ տեղի տալով, չէ կարող զբաղւել հայկական խնդրի լուծմամբ. այդ պատճառով միակ պետութիւնը, որը կարող է թեթևացնել հայ ժողովրդի դրութիւնը, միանգամայն բարւոքել նրա վիճակը, հանդիսանում է Գերմանիան։ Փոքր Ասիայի գերմանական հիւպատոսներն ու Բաղդադի երկաթուղու գերմանացի անօրէնները շատ հայերի պաշտօններ են տալիս իրանց մօտ ու օգտւում են այդ պաշտօնեաներից՝ յօգուտ Գերմանիայի ու գերմանական շահերի անհասարակ պրոպագանդա անելու, քարոզելու ոչ միայն Թիւրքիայի հայերի մէջ, այլ և Ռուսաստանի։ Բնորոշ է, օրինակ, այն, որ Վոլգայի աւազանում գտնւող գերմանական գաղութների համար Սարատովում հրատարակւող գերմանական լրագրի խմբագիրը հայ ծագում ունեցող մի անձնաւորութիւն է, որը գերմանական աւետարանական ընկերակցութեան դպրոցներում կրթութիւն ստացած սաներից է։

Գերմանացիներին վերջին ժամանակներս միացել են նաև աւստրիացիները. Նորերս «Oesterreichische Rundschau»-ում աւստրիական գեներալ Գերստների ստորագրութեամբ փոքր-ասիական առեղծւածին վերաբերեալ մի յօդւած է երևացել, որտեղ հայկական հարցին մեծ տեղ է յատկացւած ու ընդգծւած է այն, որ այդ հարցը մեծ դեր ունի կատարելիք։ Աւստրիական գեներալն ուշադրութիւն է հրաւիրում ռուսական վերջին աջողութիւնների վրա Փոքր Ասիայում ու այդ ապացոյց է բերում այն բանի, որ Ռուսաստանը մտադիր է յարուցանել հայկական հարցը։ Ռուսական աջողութիւններից առաջին տեղը նա յատկացնում է այն երկաթուղուն, որն ըստ կազմւած ու հաստատւած նախագծի պէտք է Ջուլֆայից գնայ Թաւրիզ, որից մի ճիւղն էլ գնալու է Ուրմիայի լճի ափերը։ Վերջինիս վրա ռուս ձեռնարկողները ձեռք են բերել արդէն նաւագնացութեան իրաւունք և ունեն այնտեղ հիմա երեք հատ առևտրամարդատար շոգենաւ։

«Ընդամենը 800 վերստ է այն տարածութիւնը, որը գտնվում է Ռուսաստանի փոքր-ասիական սահմանի ու Միջերկրական ծովի այն նաւահանգստի մէջ,—բացագանչում է աւստրիական գեներալը,—որը կարող է հանդիսանալ Ռուսաստանի համար լաւագոյն դուռը դէպի չը սառչող ծովը, որպիսից նա մինչև օրս զուրկ է խպառ։ Այդ հռչակաւոր նաւահանգիստն է Կիլիկիայի ափերին գտնվող Ալէքսանդրէտը, որը Մեծն Ալէքսանդր Մակեդոնացին ինքը համարել է լաւագոյն նաւահանգիստը Միջերկրականի վրա։ Բայց Ալէքսանդրէտը հիմա գերմանական երկաթուղու կայարան է. նրա դէմուդէմ գտնվում է Կիպրոս կղզին, որն անգլիացիները իրանց յատուկ հեռատեսութեամբ վաղուց են գրաւել։ Ալէքսանդրէտն, այդ զօրաւոր խաչընդոտների շնորհիւ, Ռուսաստանին վիճակված չէ տեսնելու, քանի որ նրա համար նախ նա պէտք է արեան հեղեղներից ծովեր կանգնեցնի Վիսլայի ու Օդերի աւազաններում գտնվող դաշտերում... Ալէքսանդրէտը գերմանական շահերի շրջան է ու գերմանական նաւահանգիստ. նա Միջերկրական ծովի ապագայ «Փոքր Համբուրգն» է»։

Դրանից յետոյ աւստրիական գեներալը մատնանշում է, որ Թիւրքիայում բռնկվելիք մօտակայ դէպքերը կենտրոնանալու են հայկական հարցի շուրջը։ Այդ խնդիրը այն հայ նահանգների ու հողերի հարցն է, որոնք գտնվում են Ռուսաստանի փոքր-ասիական սահմանի ու Ալէքսանդրէտի միջև։ Նա ուսումնասիրել է այդ հարցին վերաբերեալ ռուս ձեռնհաս հեղինակների գրուածքները, որոնցից աչքի է ընկնում հայերի ու Հայաստանի մասին մանրամասը խօսող գընդապետ Վենիւկովի «Ռուս-ասիական ծայրերկիրները» գիրքը։ Վերջինս թարգմանւած է գերմաներէն 1874 թ. ու իր ժամանակին անչափ յուզած գերմանական ռազմագէտներին։ Բեռլինի վեհաժողովի ժամանակ Բիսմարկը միշտ ի նկատի ունէր այդ գիրքը ու, ղեկավարվելով նրանից քաղած իր տեղեկութիւններով Ռուսաստանի անելիքների մասին Հայաստանում, ամեն կերպ աշխատեց ու աջողեցրեց նուազեցնել Ռուսաստանի պահանջները՝ Հայաստանում մտցվելիք անհրաժեշտ վերանորոգութիւնների ու նրանց երաշխիքների վերաբերեալ։

Մեծն Պետրոսից յետոյ է սկսվում ռուս-հայկական բարեկամութիւնը,—ասում է աւստրիական գեներալը.—այդ ժամանակից սկսած՝ հայերը յառեցին իրանց հայեացքը դէպի Ռուսաստան և բացառապէս նրա հովանու տակ սկսեցին պաշտպանութիւն փնտռել մահմեդականների հալածանքներից։ Յետագայ դէպքերը երկաթէ տրամաբանութիւնը աւելի զարգացրեց երկու ազգերի՝ ռուսների ու հայերի՝ փոխադարձ համակրութիւնը։

Վերջին ռուս-թիւրքական պատերազմը փայլուն յոյսեր վառեց հայերի մէջ Փոքր Ասիայում։ Բայց նրանց իղձերի իրագործումը, որն ակնարկված է Բեռլինի վեհաժողովի կողմած դաշնագրութեան 61-րդ յօդուածում, ինչ-ինչ միտումներով կանգնեցվեց քառասուն տարով։ Թիւրքերից հալածված բազմաթիւ հայեր ապաստան են գտել Ռուսաստանի սահմաններում, Կովկասում մեծ մասամբ, որտեղ նրանցից շատերը հարստացել են ու բնականաբար դարձել ռուսաց քաղաքականութեան կողմնակիցներ ու իրականացնողներ հայերի մէջ։

Աղանայի կոտորածից յետոյ հայկական հարցով հետաքրքրվել սկսեց նաև Անգլիան, բայց դա հայերի համար թեթևութիւն չը բերեց։ Ներկայ րոպէում երրեակ համաձայնութիւնը կազմող պետութիւնների մէջ տրամադրութիւն չը նկատելով օգնել հայերին, հայ պարագլուխների մի մասը դիմում է երրեակ դաշնակցութիւնը կազմող պետութիւններին՝ նրանցից հայցելով օգնութիւն իր ժողովրդի համար։ Եւ այդ շատ բնական է, քանի որ այդ պետութիւններն են, իրաւ, որ ապացուցեցին այն, թէ իրանք բովանդակ աշխարհի վիճակի անօրէններն են. ամբողջ քրիստոնեայ աշխարհի առաջ նրանք մի միլիոն անկուլտուրական և խաղաղ անքաղաքակիրթ ալբանացիների համար ստեղծեցին առանձին պետութիւն։

Անգլիական մամուլի մէջ վաղուց են խօսում այն մասին, որ հայկական հարցը կարող է յարուցվել ոչ թէ Գերմանիայի կողմից, այլ Ռուսաստանի։ «Daily Teleg.» լրագրի Պետերբուրգի թղթակիցը ուղարկել է Լոնդոն մի տեղեկութիւն, որի համաձայն ռուսաց կառավարութիւնը պէտք է պահանջի Բեռլինի վեհաժողովում Թիւրքիայի անունից հայերին խոստացված վերանորոգութիւնների իրագործումը ու բացի այդ՝ պահանջելու է նաև իր համար յատուկ լիազօրութիւն բոլոր մեծ պետութիւններից՝ վերահսկելու բարենորոգումների անշեղ իրագործման։ Այդ տեղեկութիւնը չէ հերքված ու չէ հերքվում մինչև օրս. ակներև է, որ հայկական հարցը դառնում է հերթական։ («Новое Время»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 21 մարտի

«Бирж. Вѣд.»-ի թղթակից Օլգինը մի շաբաթ առաջ մեկնեց քաղաքից՝ թերթերում շնորհակալութիւն յայտնելով Վանի հայ ժողովրդին իրան արած ընդունելութեան համար։ Մի ուրիշ ժողովում նա, նորից շնորհակալ լինելով, փափագ յայտնեց, որ իրանով Թիւրքահայաստանում սկսված յարաբերական կապը պահվի ռուս մամուլի հետ և հայերը չը թերանան ուղղակի յարաբերութիւն պահել նրա հետ, մի պարտականութիւն՝ որը ռուսահայերը պարտաւոր էին անելու և թերացել են անելու, թէև, ինչպէս տեղիս «Աշխատանք» թերթը յայտնեց—և որին մենք էլ ձայնակցում ենք—ռուսահայերը հազիւ թէ թերացած լինեն այդ պարտականութիւնը կատարելու։ Թղթակից Օլգինի այդ մեղադրանքը մենք համարում ենք սխալ. իսկ վանեցիները, որ Կ. Պոլսի ու Բիթլիսի հայ թերթերի հետ անգամ կանոնաւոր թղթակցութիւն չունեն, անհաւատալի է որ երբեւիցէ յարաբերութիւն հաստատեն ռուս մամուլի հետ, որը չեն տեսնում և որի լեզուն չեն էլ հասկանում. այդ պարտքը նորից ռուսահայերի վզին է ընկնում. շատ միամիտ պէտք է լինի պ. Թղթակիցը, եթէ կարծում է, որ վանեցիները այդպիսի կապ կարող են ստեղծել։

Քաղաքումս վալի Իզզէթ-բէյի նախաձեռնութեամբ կազմվել է մի յանձնաժողով, որ պաշտօն ունի երկրի հայ ու քիւրդ ժողովուրդների միջև համերաշխութիւն ու սէր հաստատել. Նրան անդամակցում են հայ և թիւրք երեւելիները և որը գումարվելիս է եղել հայոց առաջնորդի և թիւրքաց մուֆթիի փոխն ի փոխ նախագահութեան ներքոյ։ Յանձնաժողովը սկսել է արդէն իր աշխատութիւնները, թէև մենք դա մի հեգնութիւն ենք համարում, որովհետև միթէ ծիծաղելի չէ ձգտել համերաշխութիւն հաստատելու այլազան տարրերի միջև, երբ նոյնիսկ բուն հայերի մէջ համերաշխութիւն չը կայ։ Ժողովրդի լուրջ դասակարգի յայտնած բաղձանքների համաձայն՝ ջանքեր եղան թէպէտ հայ կուսակցութիւնների միջև համաձայնութիւն առաջ բերել, ուստի նրանց հրաւէրներ եղան առաջնորդարանում խորհրդակցական ժողով գումարելու այդ նպատակով, բայց Դաշն. կուսակցութիւնը մերժեց այն առարկութեամբ, թէ չէ կարող խորհրդակցութեան նստել մի կուսակցութեան հետ (Սահմ.-Ռամկավար), որ «Ազգի» թղթակցութիւնով զրպարտել է Դաշնակցութեան ու դրա հետեւանքով այսօր Դաշն. ընկերները ձերբակալվում ու բանտարկվում են, որպէս հայ ժողովուրդը բռնի կերպով գլխողներ*)։

Մուրակ

---

*) Իբրև թէ Վաշինգտոնի օսմ. հիւպատոսը Թիւրք կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրած լինի «Ազգի» մի թղթակցութեան վրա, և դրա հետեւանքով բռնւած լինեն ձերբակալութիւններ Վանում. Մ.

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 31 մարտ

Ազգային կեանքի մէջ առաջիկայ շաբաթը կը խոստանայ ըլլալ նշանաւոր։

Վերջին ազգային ժողովի նիստէն առաջ զանազան կուսակցութեան պատկանող երեսփոխաններու միջև խորհրդակցութիւն մը կատարուեցաւ Արշարունի պատրիարքի մասին։

Ընդհանուր համաձայնութիւն մը կայ, առանց նոր յուզում առաջ բերելու, Արշարունի պատրիարքը պաշտօնէ զադրեցնել՝ անոր պատիւն ալ փրկելով միանգամայն։

Մասնաւորապէս իր հիւանդագին վիճակը խղճալ կուտայ ամենուն, և ամենքն ալ ներողամտութեամբ ու բարեացակամութեամբ կուզեն վերաբերուիլ իրեն հետ։

Վարչութիւնն ալ համամիտ է պատրիարքին հրաժարման, սակայն կուզէ որ կուսակցական տագնապ առաջ չգայ և աթոռը երկար ատեն պարապ չմնայ։ Ընդհանուր կերպով համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ երեսփոխաններէն ոմանք Արշարունի պատրիարքին դիմեցին և խնդրեցին, որ ի սէր համերաշխութեան ինք պարզ հրաժարականով մը հրաժարելու տրամադրութիւն ցոյց տայ։

Արշարունի պատրիարք յօժարած է ուզուած ատեն հրաժարական տալու և քաշուելու պաշտօնէ։

Արդէն ինքն ալ շատ տրամադիր չէ երկար ատեն պաշտօն վարելու, վասնզի շատ կարգ ու կանոնի տակ ապրելու վարժ ու տրամադիր չէ։

Արշարունի պատրիարքին անմիջապէս յաջորդ մը ընտրելու պէտքը ստիպողական ըլլալով՝ հիմա այս շաբթու խորհրդակցութիւն պիտի կատարուի յաջորդին համար և պիտի աշխատուի ընտրելիի մը վրայ համաձայնիլ՝ Զատիկէն յետոյ պատրիարքական խնդիրը կարգադրելու համար։ Սակայն մինչև այն ատեն՝ չենք գիտեր թէ կարելի պիտի ըլլա՞յ համաձայնութեան մը գալ՝ ընտրելիի մը վրայ։

Մինչև հիմա ոեւէ եկեղեցականի խօսք եղած չըլլալով՝ կարող չեմ ձեզի ըսել, թէ Արշարունիի հաւանական յաջորդը ով է։

Շատեր կը խօսին Դիարբէքիրի առաջնորդ Զաւէն եպիսկոպոսին վրայ, իսկ ուրիշներ Կարնոյ առաջնորդ՝ Սմբատ եպիսկոպոսին վրայ։ Իսկ փոքրամասնութիւն մըն ալ կը խօսի Սեբաստիոյ առաջնորդին՝ Թորգոմ եպիսկոպոսի վրայ։ Երբ տեղեկանամ միջկուսակցական ժողովներու արդիւնքին, անմիջապէս կը հաղորդեմ։

Շառայլ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 7 ապրիլի

Միանդաբում Դարալաք գիւղի հայերի պահանջների և եկեղեցու կործանման մասին թեմակալ Ներսէս վ. Մելիք-Թանգեանի բողոքը ռուսաց հիւպատոսին գտաւ սիրալիր ընդունելութիւն և հովանաւորութիւն։ Մի քանի օր առաջ Սօուջ-Բուլաղի ռուսաց հիւպատոսը տասը կօզակներով գնաց Դարալաք և առանձին սենեակում, ուր հայերից և հիւպատոսից բացի ոչ ոք չը կար, հիւպատոսը սկսեց իրողութիւնը ստուգել հայերից եկեղեցու քանդման վերաբերեալ, որ կատարվել է յայտնի բռնապետ և գիւղատէր Հաջի Ելխանիի միջոցով։ Դարաւոր ճնշումներից ու դառն կեղեքումներից սարսափած հայերը յայտնել են, որ եկեղեցու շէնքը ինքն իրան է քանդվել, այլ ոչ թէ Ելխանին քանդել, մի բացարձակ իրողութիւն, որ բոլոր հարևանները իմանում են արդէն։ Սարսափած, վախկոտ և գիւղատիրոջ սարսափից ահաբեկ հայերի խոստովանութիւնը շատ վատ տպաւորութիւն է արել հիւպատոսի վրա։ Սա այդ մասին յայտնել է թեմակալին։

Հայերն անկասկած Ելխանիի պէս մի բարբարոսի երկիւղից չը պէտք է համարձակէին ճիշդը վկայել ու պահանջել, և, ինչպէս հաստատ տեղեկութիւններ կան, Ելխանին մահով է սպառնացել հայերին, եթէ վերջինները համարձակվէին իրան աննպաստ վկայութիւններ տալ ռուսաց հիւպատոսին։

Թեմակալ հայր սուրբը մի երկրորդ գրութեամբ բացատրեց գործի էութիւնը հիւպատոսին և խնդրեց, որ այլ անձնաւորութիւններից ստուգէ ճշմարտութիւնը և պաշտպանէ հայ ժողովրդի իրաւունքը։

Սիրելի է յուսալ, որ հիւպատոսը, իրազեկ լինելով ճշգրիտ իրականութեան, ի գործ դնէ արդարութիւնը և պաշտպանէ հայերի դարաւոր իրաւունքը Պարսկաստանում։

Երկար ժամանակ է, որ Ատրպատականի դատաւոր Շուջա-ուդ-Դովլէի Ատրպատականի վրա լիազօրութիւն ձեռք բերելու հարցը խնդրի տակ էր։ Հարցը վերջապէս լուծումն ստացաւ այս օրերս։

Նորընտիր թագաժառանգը Թէհրանից կարգադրել է հեռագրով հրամայել է Շուջա-ուդ-Դովլէին ճանաչել փիշքար-քուշել, այն է՝ Ատրպատականի լիազօր դատաւոր։

Բացի դրանից թագաժառանգն ուղարկել է մեր դատաւորին առաջին կարգի ականակուռ սուր։

Հասնելով իր ցանկացածին Շուջա-ուդ-Դովլէն մեծ պատասխանատուութիւն է առնում իր վրա երկրի կարգ ու կանոնի վերաբերութեամբ։ Ժողովուրդը մեծապէս գոհ մնաց եղած կարգադրութիւնից և լիայոյս է, որ հանդիսատես է լինելու բարւոք գործունէութեան։

«Մշակի» ընթերցողներին ծանօթ է այն բելգիացի պաշտօնեայի սպանութիւնը, որ կատարվեց Սօուջ-Բուլաղի շրջանի քիւրդերի կողմից։ Սպանվածի ծնողների պահանջմամբ՝ մարմինը փոխադրվեց նրա հայրենի երկիրը։ Պարսից կառավարութիւնը փոխադրեց Բելգիայի մինիստրութեան 125,000 ֆրանկ իբրև տուգանք սպանվածի համար, որ պիտի տրվի զոհի ծնողներին։

Երկար ձմեռից յետոյ եկաւ քաղցր գարունը։ Թաւրիզում պտղատու ծառերը ծաղկել են արդէն, անձրևները տեղում են առատ և ժամանակին. ցանքսերը գերազանց են և պտուղներն առատ, եթէ վրա չը հասնեն բնութեան նորանոր աղէտները։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՌՉՆԱՀԱՆԴԷՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Երէկ, ապրիլի 17-ին, Թիֆլիսում բացվեց գարնանային թռչնահանդէսը։

Նրա կազմակերպողն է թռչնաբուծութեան սիրողների ընկերութիւնը։

Բացումը տեղի ունեցաւ Միքայէլեան փողոցի № 65 տանը, ուր առաջները զետեղված է Հալաբարի կլուբը։

Բացման ներկայ էին Կովկասեան Գիւղատնտեսական, Հայ Գիւղատնտեսական, Թիֆլիսի երկու թռչնապահական ընկերութեան, մամուլի և մի քանի հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։ Ներկայ էր և քաղաքագլուխ Ալ. Խատիսեան։

Մաղթանք կատարելուց յետոյ՝ թռչնաբուծութեան սիրողների ընկերութեան նախագահ Պ. Իսարլով բացեց ցուցահանդէսը մի ճառով, որով բացատրեց այն նպատակը, որ ունեն գարնանային թռչնահանդէսները Թիֆլիսում։

Թռչնահանդէսի բացման առիթով ողջունեց համառուսական թռչնաբուծական ընկերութեան կովկասեան բաժնի ներկայացուցիչ Դրբօգլավ, որը արտասանեց թռչնաբուծութեան վերաբերեալ մի ճառ։

Ցուցահանդէսը բաւական ընդարձակ է։ Զանազան տեսակ հաւերի և ջրային թռչունների թիւը հասնում է 137-ի, ճագարների և այծերի թիւը 28, թռչնաբուծական արդիւնքների համարների թիւը 24։

Ցուցահանդէսը կը շարունակվի մինչև 22 ապրիլի։ Նա բաց կը լինի ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան ժամը 8-ը։ Մուտքը արժէ հասակաւորների համար 20 կ., աշակերտների և զինւորների համար 10 կոպէկ։

Ն—ն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ի պատասխանի Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի Զատկի առիթով իր և իր թեմի հայ ժողովրդի կողմից ուղարկած շնորհաւորական հեռագրերի՝ բարեհաճեցին պատասխան-հեռագրեր ուղարկել շնորհաւորելով Զատիկը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գէորգ V և Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնայի հետ միասին։

◆ Ապրիլի 14-ին, Զատկի օրը Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը այցելեց Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսին, Կովկասի փոխարքայի զինւորական մասի օգնական գեներալ Շատիլովին, փոխարքայի դիւանապետ հօֆմէյստէր Պետերսոնին։ Սրբազանին այցելեցին Պետերսոնը, կովկասեան ուսումն. շըրջանի հոգաբարձու Ռուդոլֆը, Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ բարոն Ֆոն-դէր-Ռօպը։ Բացի դրանից նոյն օրը առաջնորդարանում սրբազանին ներկայացան Թիֆլիսի հայ կրթական և ազգային հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, որոնցից մի քանիսի հետ սրբազանը ունեցաւ խօսակցութիւն զանազան հասարակական խնդիրների վերաբերութեամբ։

◆ Էջմիածնից մեզ տեղեկացնում են, որ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը Կայսերական Բարձր շնորհի առիթով ստանում է բազմաթիւ տեղերից շնորհաւորական հեռագրեր ու գրութիւններ։

◆ Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր տեղի կունենայ Թիֆլիսի Հայ Երաժշտական Ընկերութեան երեկոյթը։ Նորաբաց Ընկերութիւնը, որ նպատակ ունի նպաստել երաժշտական արուեստի զարգացմանը մեր երկրում, ներկայ երեկոյթով սկիզբն է դնում մի շարք համերգների, որոնք պէտք է ժամանակի ընթացքում իրագործեն մի սիստեմական ծրագիր։ Յոյս ունենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը այսօր կայցելի երեկոյթը և դրանով թէ պատճառած կը լինի գեղարուեստական բաւականութիւն և թէ աջակցած Ընկերութեան վարիչների ջանքերին աւելացնելու Ընկերութեան եկամուտները հաստատ գործունէութիւն կազմակերպելու համար։ Երեկոյթը բաղկացած կը լինի գրական-երաժշտական բաժիններից, որոնց մէջ մասնակցութիւն կունենան, օրիորդ Քալանթար, տիկիններ Սպենդիարեան, Աֆրիկեան, Գաբագաշ դաշնակահար Պըշնով, ջութակահար Վրայր և ուրիշներ։

◆ Այսօրվանից փոխվում են Անդրկովկասեան երկաթուղային գնացքների երթևեկութեան ժամերը։ Նոր ժամանակացոյցը, որ տպվում է «Մշակի» ներկայ համարից սկսած, կազմված է երկաթուղային վարչութեան կողմից ամբողջ մի տարվայ համար։

◆ Երէկ ձեմարանից Թիֆլիս եկան 1-ին լսարանի աշակերտներից 10 հոգի ուսուցիչ Թ. Տօշեանի առաջնորդութեամբ էկսկուրսիայով։ Եկողները երէկ ներկայացան առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, որ պատուիրել է ամեն յարմարութիւնները տալ էկսկուրսանտներին։

◆ Զատկի օրը Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսին այցելութիւն տուին փոխարքայի երկու օգնականները, երկրագործութեան գլխ. կառավարիչ ստատս-սեկրէտար Կրիվօշէինը, գեներալիտէտը, ուղղափառ հոգևորականութեան ներկայացուցիչները և այլն։

◆ Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսը ապրիլի 15-ի երեկոյեան մեկնեց Բաթում։

◆ Առաջիկայ կիրակի օրը, ապրիլի 21-ին, Թիֆլիսի թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը վարդապետ է ձեռնադրելու Շուշու թեմական դպրոցի ուսուցիչ ճեմարանաւարտ մի պարոնի։

◆ Զատկի թաթխման օրը աղքատ ընտանիքներին բաժանելու համար ստացել ենք՝ 1) Քրիստոսաւորեանից—10 ռուբ., 2) մի անից—15 ր. և 3) մի տիկնոջից—1 ր. յանձնելու չունևոր Սօնա Արշեանցին։

◆ Թիֆլիսում էլեկտրական լուսաւորութիւն հաստատելու գործի առիթով եկած պրոֆ. Արտէմիևը մեկնեց Խարկով։

◆ Թիֆլիսում բացվելու է կադէտների երկրորդ կորպուս։

◆ Նախագծված էր տօնել Թիֆլիսի զինւորական հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Օզէրեցկովսկիի բժշկական գործունէութեան 35-ամեակը, սակայն բժիշկը համեստաբար հրաժարվեց։

◆ Երէկ Դիդուբէում տեղի ունեցաւ գարնան 1-ին ձիարշաւը։

◆ Այսօր, հինգշաբթի, Հայկական սեկցիայի սիրողները ներկայացնելու են Ժողովրդական Տանը առաջին անգամ հայերէն լեզուով նոր պիէս՝ «Ինչ տեսել ես, էլ չես տեսնի»։ Այդ պիէսը պատկանում է վրացի դրամատուրգ Ցագարելիի գրչին, որի «Խանումը», «Սիբիրականը» և «Բայղուշը» միշտ մեծ աջողութեամբ խաղացվել են հայ բեմի վրա։

◆ Այսօր Հասարակական կլուբում Ա. Բաբայեանը ռեֆերատ է կարդալու ուտեստեղէնը կեղծելու մասին։ Շաբաթ, ապրիլի 20-ին, Ա. Քալանթար խօսելու է Փոքր-Ասիայի տնտեսական դրութեան մասին։ Ակումբի երեկոն լինելու է մայիսի 11-ին

◆ Այս աշնանը ռուսաց օրէնսդրական հաստատութիւնները քննելու են ինժեներ Նեպրինցեվի կազմած նախագիծը Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակի նոր սեփական շէնքի կառուցման մասին։ Յիշեալ նախագծով շինութիւնը կառուցվելու է Վէրայի մօտ, Գօլովինսկի և Վօէննի փողոցների անկիւնում, Ա. Մելիք-Ազարեանի նախկ. շէնքի կողքին, և արժենալու է նախահաշվով 700,000 ռուբլի։

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական թատրոնում

Զատկի երկուշաբթի օրվանից Արքունական թատրոնում սկսել է իր ներկայացումները նոր դրամատիկական մի խումբ, ղեկավարութեամբ Լեբեդևի։

Հասարակութիւնը լցնում է թատրոնը և ընդհանրապէս գոհ է խմբից։

Կան հին փորձված դերասանական դէմքեր, կան բազմաթիւ երիտասարդ թարմ ուժեր։

Մենք ներկայ եղանք Տարսկիի «Прапорщикъ Запаса» և Դրէյէրի «[illegible]», նաև «Մոխրոտիկ» պիէսների ներկայացումներին։

Առաջինը մի նոր պիէս է զինւորականների կեանքից, գրված թեթև և սահուն, լի աշխոյժով, աղմուկով և ծիծաղաշարժ դէպքերով, բայց ոչ խոր և իմաստալից։

Երկրորդը յայտնի պիէս է, մի քանի անգամ Թիֆլիսում խաղացված թէ ռուս և թէ հայ բեմերի վրա։

Երրորդը մանկական գրականութեան մէջ յայտնի «Մոխրոտիկ» հէքիաթի փոխադրութիւնն է, որը շատ հետաքրքրեց թատրոն ժողոված մանուկներին։

Դերակատարներից յիշենք հետևեալներին.

Դերասանուհի Ն. Զարուսկայա գլխաւոր

կանացի ույժն է խմբի մէջ։ Նա խաղում է խելացի, տիպական։ Ընդունակ է արտայայտել ուժեղ դրամատիկական րոպէներ. աշխատում է հարազատ մնալ հոգեբանական ելևէջների բնոյթի մէջ և մելօդրամատիկան չափազանցութիւնների չը դիմել։ Համեմատաբար թոյլ են անցնում նրա դերերի այն մասերը, որտեղ բռնկումներ չը կան և պէտք է աւելի հասարակ տրամադրութիւններ վերարտադրել։

Դերասանուհի Կնեաժեվիչ Մոխրատիկի դերում աջող էր. նա կարողացաւ ըստեղծել համակրելի մանկաբնոյթ մի դէմք, որ գրաւեց մանուկների ուշադրութիւնը դէպի ինքը։ Դերասանուհին պարեց ճաշակով։ Կնեաժեվիչ նոր ույժ է և իր առաջին քայլերն է անում բեմի վրա։

Դերասանուհի Օխոտինա լաւ է կատարում պառաւ կանանց դերերը. այդպէս էր նա Տարսկիի պիէսում և «Մոխրատիկի» մէջ խորթ մօր դերում։

Դերասանների մէջ աչքի են ընկնում Ձերնով-Լեպկովսկի, որը գեղեցիկ կերպով կատարեց բժշկի դերը առաջին պիէսում, հանդէս բերելով տեմպերամենտ, կենցաղագրական առանձնայատկութիւնների բնորոշ գծեր. Պավլով, որ գեղեցիկ է կատարում ծերերի դերեր (Դոդոն թագաւոր, պանդոկապետ). Բախմետիեվ, որը գիտէ հոգեբանական դրութիւններ վերարտադրել. Գլազօլին, որը ընդունակ է զգացմունքներ արտայայտել և բևեռել իր վրա ուշադրութիւն. Կրամօվ, որը գիտէ մտնել իր դերի մէջ. Թայիրօվ, որը գեղեցիկ արտասանում է. Ձերնեվսկի, որը իր փոքր դերերը կատարում է սահուն, Գորեվ և ուրիշներ։

Րեժիսեօրական մասը, ինչպէս երևում է, լաւ է կազմակերպված և անսամբլը խաղում է բաւարար։

Հասարակութիւնը ընդունեց դերասաններին ջերմ ողջոյններով։

Զարուսկայան ստացաւ երկու անգամ ծաղկեայ կողովներ և փունջեր։

Սիրող

ՄԱՄՈՒԼ

Էջմիածնի «Արարատ» ամսագիրն էս, Գէորգ Ալթունեանի բերանով, սկսել է դիպլօմատիական լեզու բանեցնել, մինչ կրօնական մի կենտրոնում հրատարակվող ամսագրից աւելի պատշաճ էր լսել պարզ և անարատ ճշմարտութիւն քարոզող լեզու։

Յօդուածագիրը խօսելով հայ կեանքի մի քանի երևոյթների մասին, դպրոցական ֆօնդի հարցը շօշափելով, գրում է, թէ «Դժբաղդաբար, մեր մամուլի մի քանի օրգանները (որոնք) լուռ մնացին և չը նպաստեցին»։ Ապա նա մեղադրում է հայ մամուլը, որ սա հասարակութեան ուշադրութիւնը վառ չէ պահում դէպի ժողովարարութիւնը յօգուտ դպրոցական ֆօնդի, և գտնում է, որ հայ դպրոցը ամենից շատ մօտիկ պէտք է լինի հայ ուսուցչի սրտին և ամենից շատ ուսուցչութիւնը պէտք է արձագանք տայ դպրոցական ֆօնդին ոչ միայն իրանց (իր) կօպէկներով, այլ և իրանց (իր) խօսքով ու գրչով։

Յօդուածագիրը եթէ հետամուտ է ճշմարտութեան, պէտք է քաջութիւն ունենայ ուղղակի ասելու, թէ հայ մամուլի ո՛ր օրգանները լուռ մնացին, չը նպաստեցին, նոյնիսկ խանգարեցին հանգանակութեան գործը։ Ապա նա պէտք է ցոյց տար, որ, ընդհակառակը, ուսուցչութիւնը եղաւ, ի դէմս հայ Ուսուցչական Միութեան անդամների և նրա նախագահի, որ ամենից շատ հակառակեց դպրոցական ֆօնդի հաստատմանը։ Մի՞թէ մոռացվեց այդպէս շուտով, որ այդ Միութեան նախագահը Դիլիջանում դասախօսութիւններ էր կարդում, քարոզում հիմնել գրական, այլ ոչ դպրոցական ֆօնդ և յարձակվում Էջմիածնի որոշումների վրա։ Կան պարագաներ, երբ միայն խիստ, բայց արդար պախարակումներ և դատափետումներ են հարկաւոր, այլ ոչ երկերեսանի, անորոշ մեղադրանքներ, որոնցից միամիտ ընթերցողները ոչինչ չեն հասկանայ և կամ թիւր գաղափար կը կազմեն։ Գիտենք, որ իւրայիններին մերկացնելը ոմանց աչքում առաքինութիւն չէ համարվում, բայց երբ մէկը թոյլ է տալիս իրան հրապարակախօսի դեր ստանձնել, նա տարրական քաջութիւն պէտք է ունենայ ամէն բան իր անունով կոչել...։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 16 ապրիլի

Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել ի գիտութիւն հասարակութեան, որ հետևեալ տիկնայք սիրալիր յանձն են առել կազմակերպել իրանց թաղամասերում «Սպիտակ ծաղկի» վաճառումն սոյն ապրիլի 20-ին։ I թաղամասում Գեօգար խանում Կաջար և Մ. Գ. Մինկևիչ, II-ում Մ. Ի. Անանօվա, III-ում իշխ. Ն. Ա. Դադեշկելիանի և Կ. Ֆ. Խատիսօվա, IV-ում Ե. Ա. Աւթանդիլեան, V-ում Ե. Մ. Ադելխանեան, VI-ում Ա. Ն. Մըշլայեվսկայա, VII և VIII-ում Ե. Վ. Պետրապավլօվսկայա մասնակցութեամբ Լ. Մ. Մօնինի, IX և X-ում Ա. Ն. Մըշլայեվսկայա, XI և XII-ում բարօնեսսա ֆօն-դեր Րօօպ մասնակցութեամբ Մ. Ի. Սուրժինի։ Այն տիկիններն և օրիորդները, որոնք գրվել են ծաղիկներ ծախելու, հրաւիրվում են ուրբաթ երեկոյեան գնալ իրանց թաղամասի տիկինների մօտ ստանալու ծաղիկներ, կողովներ և տուփեր։

Հանրամատչելի ձրի դասախօսութիւնների ընթերցումը, սկսած հինգշաբթի օրից, սիրալիր յանձն են առել բժ. Աղասարեան, Առուշանեան, Ղամբարեան, Մելիք-Նուբարեան, Օհանջանեան, Ֆլորինա, Ֆեոդորով և Ծերեթելի։

Դասախօսութեան տեղի և ժամի մասին կը յայտարարվի առանձին։

Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութեան նախագահ՝

Իշխ. Մարիամ Թումանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ամբողջ Սերբիայում բօյկօտ է յայտարարված աւստրիական ապրանքների դէմ։

◆ Սերբ զօրքերի Սկիւտարի մօտից հեռանալուց յետոյ, Նիկօլայ թագաւորը բոլոր սերբ-չերնօգօրական պայմանագրերը յայտարարեց անվաւեր։

◆ Ամբողջ Իտալիայում ցոյցեր են յօգուտ չերնօգօրցիների։

◆ Աւստրիական զօրքերը դիմում են չերնօգօրական սահմանը։

◆ Սկիւտարը վերցնելու ժամանակ չերնօգօրցիք կորցրին 8000 մարդ։

◆ Ալբանիայում արիւնահեղ ընդհարումներ են քրիստոնեաների և մահմեդականների միջև։

◆ Սկիւտարի կէսը աւերակ է դառել։

◆ Նիկօլայ թագաւորը բացէ ի բաց յայտարարեց, որ միմիայն ույժով նրան կը հեռացնեն Սկիւտարից, չը նայած որ մեծ պետութիւնները վճռեցին Սկիւտարը տալ Ալբանիային։

◆ Աւստրիան շարունակում է ամրացնել Բօսնիան, ծախսելով դրա վրա վերջերս 80 միլիօն։

◆ Անգլիական «Daily Mail» թերթը հաղորդում է, որ Բօլգարիայի և Աւստրիայի միջև կապված է գաղտնի պայմանագիր Սերբիայի դէմ։

◆ Անգլիական լրագիրները հաղորդում են, որ բալկանեան պետութիւնների կրած վնասները պատերազմից՝ հաւասարվում են 880 միլիօն րուբլու հետևեալ կերպով. Թիւրքիան ծախսել 330 միլիօն, Բօլգարիան 240, Սերբիան 160, Յունաստանը 120 և Չերնօգորիան 30 միլիօն։ Աւստրիայի վնասները կազմում են 140 միլիօն։

◆ Տխրահռչակ Էնվէր-բէյը և Իզզէթ-փաշան ունեցան խոշոր ընդհարում։ Իզզէթ-փաշայի արձակած գնդակը վրիպեց, որից յետոյ նա Էնվէր-բէյին մենամարտի կանչեց։

◆ «Н. Вр.»-ին հեռագրում են Կ. Պօլսից, որ Թիւրքիայի և Բօլգարիայի միջև դաշնակցութիւն կապելու մասին սկսված բանակցութիւնները կրեցին լիակատար պարտութիւն։

◆ Պարսից կաբինէտը, մերժելով Մահմէդ Ալիին վերստին ի գահ կոչելու առաջարկը, որոշեց պահանջել պետական խնամակալից՝ վերադառնալ Պարսկաստան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

14, 15 և 16 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Իսկական պետական խորհրդականներ են դառնում Երևանի և Թիֆլիսի արքունի պալատների կառավարիչներ Լեմնեակը և Սմիրնօվը։

Գաղտնի խորհրդական է դառնում Կովկասի փոխարքայի խորհրդի անդամ Ջաւնկօվսկին։

Վլադիմիրի 1-ին աստիճանի շքանշան է տրվում Պետական Խորհրդի անդամ կոմս Վիտտէին։

Աննայի 1-ին կարգի շքանշանով պարգևատրվում է Ներքին գործերի մինիստր Մակլակօվը։

Արդարադատութեան մինիստրի օգնական Գասմանը խնդրագրով արձակվում է պաշտօնից, մնալով սենատօր։ Նրա տեղ նշանակվում է սենատօր Իլեաշէնկօ։

ՄՕՍԿՎԱ։ Տուգանվեց «Р. С.»-ն 500 ր. № 80-ի համար։

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ։ Եկաւ առևտրի մինիստրը։

ԲԵՐԼԻՆ։ Րէյխստագը առանց վիճաբանութիւնների ընդունեց ռուս-գերմանական գրականական պայմանագիրը։

ՏՕԿԻՕ։ Մայիսի 1-ից պօստային կապ է հաստատվում Եապօնիայի և Ռուսաստանի միջև։

ԲԵՐԼԻՆ։ Օդագնաց չեխ Ստիպլուշէկը կատարեց առաջին աջող թռիչքը ռուս ինժեներ Լուցկիի սիստեմով պատրաստած նոր գործիքով։ Օդագնացի կարծիքով՝ այս նոր գործիքով կարելի է Բեռլինից Պետերբուրգ թռչել 15 ժամում։

ՄՕՍԿՎԱ։ Օդագնաց Գաբէր-Վոլինսկին, բարձրանալով 2800 մետր, սահմանեց բարձրութեան համառուսական նոր մրցակէտ։

Բուսակեր ընկերութիւնների ներկայացուցիչների համառուսական համագումարին մասնակցում են մօտ 200 մարդ։

Պատերազմի դաշտից վերադարձաւ քաղաքային սանիտարական խումբը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 1 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր.։ **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ով մի անգամ՝ սովորել է ամեն շաբաթ կանոնաւոր կերպով լուանալ իր գլխի մազերը Պիկսաֆօնով, պէտք է խոստովանէ, որ դրանից առաւել ուրիշ միջոց չը կայ մազերը առողջ և ծաղկեալ դրութեան մէջ պահելու։ Պիկսաֆօնը ոչ միայն մաքրում է գլխի մազերը և կաշին, այլև, շնորհիւ ձիւթի պարունակութեան իր մէջ՝ աւելի բարերար ազդեցութիւն է թողնում մազերի վրա։ Պիկսաֆօնով մի քանի անգամ լուացվելուց յետոյ իւրաքանչիւր ոք կը համոզվի նրա առաւելութեան մէջ։

Դրա համար և Պիկսաֆօնը ներկայանում է իսկապէս ամենալաւ միջոց գլխի կաշու մաքրման և մազերի ամրացման գործում։

Մի սրուակը, որ կարող է բաւականանալ մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կ.։ Բոլոր ամենալաւ վարսավիրների մօտ գլխի լուացումները կատարվում են Պիկսաֆօնով։

(M. 136289/136296)

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր **Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ**

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րեցեպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» րեցեպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Ներկարմատի շալվարը կամ մօդնի իւրկէնց», խիստ ծիծաղաշարժ վօդևիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօնայի հեանդէքէր» յայտնի վօդևիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) «Միւլիօնի դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գեղեցիկ նկարներով։ Գինը 7 կ.։
6) «Մշտական զօրք եւ միլիցիա» Պիմենօվից թարգմանած։ Գինը 5 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով։ Ճանապարհածախսը ոչինչ՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընդամենը՝ զակազով)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(Հ. Կ.) 44. 100—27

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ
ՀԱՄԲԱՒԱԲԵՐ

Ես, որպէս ստամոքսային հիւանդութիւնների մասնագէտ բժիշկ, փորձելով «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը» գտայ, որ նա տարբերվում է խոշոր յատկութիւններով և մեծ առաւելութիւններով։ «Ստոմօկսիգէնը» հասարակ լուծողական չէ, այլ իր ներգործութեամբ կանոնաւորում է մարսողութեան ընթացքը և ի վերջոյ ոչ միայն ժամանակաւորապէս անհետացնում է կապութիւնը, այլ և միանգամայն ոչնչացնում է նրան։ Բացի դրանից «Ստոմօկսիգէնը» բոլորովին անվնաս է և միատեսակ լաւ ներգործութիւն է անում թէ փոքրահասակների և թէ մեծերի վրա, ապացուցելով դրանով, որ նրա դօզերօվկան կատարված է շատ ուղիղ։ Դ-ր Ա. Ե. Լ. Մոսկվա։

«Ստոմօկսիգէնը» կարելի է ստանալ իւրաքանչիւր դեղատան մէջ։

(П. 49330)

Լոյս տեսաւ
«ՊԵՍՏԱԼՕՑՑԻ» գրատան հրատարակութեամբ
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
ՍԱՐԵՐԻ ԾՈՑՈՒՄ
մանկական պատմուածք 4 պատկերով.
Գինը 15 կոպ.
Պահեստը—«Պեստալօցցի գրախանութ՝ Թիֆլիս, Միքայէլեան փողոց № 101.
287. 3—2

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ
Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների
ՎԵՐՋԻՆ օրինակները

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր. կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ. ԼԻԱԿ. ԲԱՌ., գինը 6 րուբ., կազմած 6 ր. 50 կոպ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.

(Հ.Հ.) 265. 10—4

ԻՄ ԾԱՆՕԹԸ

Խօսք չէ գտնում յայտնելու իր շնորհակալութիւնը Ձեր «Մետրօվին» դեղի համար, որի ընդունելուց յետոյ այլևս նա հակումն չէ զգում դէպի ոգելից խմիչքեղէններ։ Ամենքին պիտի ասեմ, որ «Մետրօվին» անունով դեղ գոյութիւն ունի, որը փրկում է այդ ախտից, և կոչ եմ անում մատնանշել այն ուղին, որով պէտք է ընթանալ։ Վօլինսկի նահ., 14 նոյեմբ., 1912 թ.։ «Մետրօվինը» կարելի է գտնել բոլոր դեղատներում և դեղագործատներում։ Տեղեկութիւնների համար դիմել՝ С.-Петерб. почт. ящ. № 371.

(П 63721)

КРЕМЪ МЕТАМОРФОЗА ОТЪ ВЕСНУШЕКЪ и ЗАГАРА
НАСТОЯЩІЙ ТОЛЬКО
Т-ва ПРОВИЗОРА
А. М. ОСТРОУМОВА

15—3 (M. 147685)

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱՆ
ընդունում է ցինկօգրաֆիական ԿԼԻՇԷՆԵՐԻ պատուէրներ և պատրաստում է ճշգրտութեամբ, մաքուր և մատչելի գներով։
Большая-Ванкская ул. № 12.
(Հ. Կ.) 222. 8—6

Գ. ԳՕՐՆԻԳ
Գօլօվինսկի պր. 11, զինուոր-պատմական թանգարանի մօտ։

Г. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
СУЩ. СЪ 1873 Г.
СПЕЦ.: ОКУЛИСТ. ОПТИКА. ЕДИНСТ. НА КАВКАЗѢ ШЛИФОВАЛЬНЯ ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛЪ
БИНОКЛИ ДЛЯ ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ ВСѢХЪ ЛУЧШИХЪ СИСТЕМЪ И ФАБРИКЪ.
ГОЛОВИНСК. ПР. 11 ОКОЛО ВОЕННО-ИСТ. МУЗЕЯ.

[illegible]

Հ. Կ. 38. 10—5

Աշխարհի ամենաանուրբ ժամացոյցը „ԲՕՆԷՐ"
Իսկական ժընեվեան եւ 19 տարեկայ—միայն 4 ռուբ. 85 կոպէկով.



Մնացած բոլոր ժամացոյցները ամուր չեն նրա համար, որ, ինչպէս էլ նրանց պահելու լինես մաքրութեան մէջ, այնու ամենայնիւ խոնի փականների բացուածքներով փոշին մտնելու է ներս և կանգնեցնելու մեխանիզմի ընթացքը։ Մենք ստացել ենք ներկայացուցչութեան իրաւունքը նոր-կատարելագործ. «Բօնէր» գրպանի ժամաց. համար, որ Շվէյցարիայում պատէնտային է և ունի 51308 №-ը (մինչև այժմ չեղած)։ Այդ ժամաց. այն առաւելութիւնն ունի, որ մեխանիզմը ընդմիշտ ամուր փակված է և չունի բացվող ու ծածկվող փական. ընթացքը նկատելի է ցիֆերբլատի կողմից, այնպէս որ մեխանիզմի մէջ փոշի մտնելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ։ Դրա համար և խորհուրդ ենք տալիս իւրաքանչիւրին ունենալ այդ գործն. և ուղիղ ժամացոյց։ «Բօնէր» ժամաց. աչքի է ընկնում առանձն. իր ամուր մեխանիզմով և ուղիղ ընթացքով։ «Բօնէր» ժամաց. կապոյտ պողպատից է (և ոչ սև), շատ տափակ, ոչ հաստ արծաթէ բուրլանոցից, ոսկեզօծ կամ արծաթազօծ ֆանտազի ցիֆերբլատով, միանգամայն չքեղ զարդարանքներով, դրսից երևացող անկերային մայատնիկով, ընթացքը 15 քարերով, լարումը 40 ժամը մի անգամ «Րէմօնտուար»։ Այդ ժամաց. ուղ. ենք զարնիտուրի հետ միասին, բաղկացած հետևեալ առարկաներից. 1) Թատրօն. հեռադիտակ ախրոմատիկ 4 ապակիով սովորական մեծութեան, 2) Ամերիկական ոսկուց շղթայ՝ երկ-շարք, 3) Մօդային բրէլոկ և զամշեայ քսակ, 4) Ժամաց. գողացվելուց պահպ. իր, 5) Արտասահմ. կաշուց պօրտմօնէ 7 բաժ. և մեխանիկ. փականով, 6) Կատուչուկէ կնիք պատուիրողի անուն-հայրանուն-ազգանունով, 7) Պարիզեան պլաստօգրաֆ, որ տառացի բնականօրէն ցոյց է տալիս ամեն տեսակ տեսարաններ, 8—13) 6 հատ շատ հետաքրք. պատկերն. պլաստօգրաֆի համար, 14) չքեղ մատանի ամերիկ. իսկ. ոսկուց «Դուբլէ» քարերով, 15) Գրպանի պերօ գրելու համար, 16) Ածելի à la «Gillet», որի միջոցով իւրաքանչիւր ոք կարող է հեշտութեամբ ածիլվել առանց վտանգի, 17) Ածելիի համար տափ, 18) Վրձին, 19) Փոքրիկ թաս։ **«Բօնէր» փոխանակ 12 ր.—միայն 4 ր. 85 կ.**, 2 զարնիտ. **9 ր. 20 կ.**։ Նոյն զարնիտ. կանացի ժամացոյցով (փակ մայատնիկով) միևնոյն գնով։ Ժամաց. ուղ. ենք մինչև րօպէները ստուգված, 6 տար. երաշխ., վերադիր վճարով։ Ճանապարհածախսը 40 կ. (Սիբիր 75 կ.)։

Հասցէն՝ Т-во «ЭЛЕКЦІОНЪ», Варшава. отд. 50.

(18,2) (B. 21560) 3—2

„ԳԻՐ" ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ամատունի Ս. վ. «Հայոց բառ ու բան»	2 ր.	
Լէօ, «Գրիգոր Արծրունի» 3 հատոր	4 ր.	
» «Ս. Մեսրոպ»		75 կ.
» «Հայկական տպագրութիւն» I հ.	1 ր.	20 կ.
» «Հայ գրքի տօնը»		25 կ.
» «Մելիքի աղջիկը»	1 ր.	50 կ.
» «Գլադստօն»		80 կ.
Ահարոնեան, «Շվէյցարական գիւղ»	1 ր.	
Զապէլ Եսայեան, «Աւերակներու մէջ»	1 ր.	
«Գեղարուեստ», հանդէս, 4 գիրք	8 ր.	
Մատիկեան Հ. Ա., «Անանունը կամ կեղծ-Սմբատ»		65 կ.
Մարկուարտ, պրօֆ. Յոս. «Պատմութիւն հայերէն նշանագրերու ի վարուց Ս. Մաշթոցի»		60 կ.
Էդիլեան Գ., «Հին Աստուածներ՝ Շանթի»		15 կ.
Ղուկասեան Մ., «Նահապետական տուն»		5 կ.
Տէր-Աւետիքեան Ստ., «Զարաբատիկ թուղթը»		8 կ.
Միւլլեր Ա., «Խաղաղասիրական պատանեկան գիրք» թարգմ. Ի. Ե.		40 կ.
Ռոտինեան տ. Վ., «Գործնական խոհարարական դասագիրք» II տիպ.		75 կ.
Ա. Շիխեան բժ., «Տուբերկուլօզը, թոքախտը և հասարակութիւնը»		25 կ.
Մեհրաբեան Գ. բժ., «Տուբերկուլեօզ և նրա դէմ կռւելու միջոցը»		30 կ.
Սենկևիչ, «Ցո՞ երթաս»	1 ր.	50 կ.
Դիկկենս, «Դաւիթ Կօպպէրֆիլդ» 3 հատոր	2 ր.	25 կ.
Շնիցլէր Ա., «Երկերի ժողովածու»	1 ր.	
Տուրգենեվ, «Գարնանային ջրեր»		35 կ.
Տուրգենեվ, «Հայրեր և զաւակներ»		75 կ.
Տէրեան Վ., «Բանաստեղծութիւններ»	1 ր.	
Իսահակեան Ա., «Բանաստեղծութիւններ»	1 ր.	
«Ակնարկ մը Վիեննական Մխիթար. Միաբանութեան գրական գործունէութեան վրայ» (67 պատկեր.)	2 ր.	

Դիմել՝ Тифлисъ, кн. маг. «ГИРЪ». 285. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорис-Меликовская улица, домъ казенный